ինչ եղեալ են վասն միաբանութեան հայոց, իսկ կաթուղիկոսն նմա ասացեալ է. եթէ թողեալ զլեռնականսն [Լիբանանցիք՝] լիցիս միայն ի կողմն վէնէտիկեցւոց, դիւրաւ մարթ է լինիլ. բայց ցորչափ ունիս զլեռնականսն, անհնար է։ Իսկ պարոն Յովսէփն տայ պատասխանի, ունիմ զվէնէտիկեցիս, իսկ զլեռնականսն թողուլ զի՞նչ հարկ է, և այսու բանիւ խափանեալ է խօսքն։...

Ցամի տեառն 1769 — Նուաստ ծառայք

ի սեպտեմբերի 22 ի Հալէպ — Հ. Մանուէլ, Հ. Սուքիաս և Հ. Միքայէլ

ՄՂԳ.

Մանր մունր լուրեր՝ ազգերու երկրատիրութեան հաշիւներու շուրջ։

Գերապատիւ Աբբայ Հօրն խնում բազում խոնարհութեամբ և սիրով ողջոյն ի Քրիստոս Յիսուս

... Երկրորդ օլախքն և սըափքն հպարտացեալ յաղթութեամբ մոսկովին, պղտորութիւնս բազումս յարուցանեն, և զօրքն կայսեր ի յառտեալ կուտեն. և կայսրն անձամբ վերստին մայիսի վեցին գալոց է աստ. և աստի յառտեալ գնալոց. և նշան պատերազմի երևի ընդ մոսկովին, զի բազում չարիս հասոյց, քահանայից կրօնաւորաց և կուսանաց և եկեղեցեաց ևն. և տաճկին աւելի քան զմիլեօն քիւէ ցորեան դրամով տուաք և ասեն թէ այսու դաշամբ, զի դարձուսցէ զպէլըրղատն առ կայսրն, նաև որչափ երկիր առեալ է մոսկովն ի տաճկէն, որք յառաջ կայսերն եղեալ էր թափեսցէ ի ձեռաց մոսկովին և իւր լիցի։ Նաև ասեն թէ կայսրն զփեսայն իւր զբրինձ ալպերթն կամի թագաւորեցուցանել ի լէհ. որովհետև է որդի թագաւորին լէհցւոց։ Եւ եռապատիկ պատրաստութիւն է անօթուց պատերազմի։ Իսկ յաղագս այնորիկ թէ կոստանդնուպօլիս առցի, և թագաւորութիւն տաճկաց բարձցի, այս բնականաբար անհնարին է, զի ոչ ոք յինքնակալաց թողու այսմ լինիլ... զի տակաւին աստի հեռի գոլով մոսկովն, այնչափ ամբարտաւանին, մինչև ասել ոմանց, թէ զնէմցէն և զմաճառն մինչև ցստղդեայ մանուկն ի սուր սուսերի մաշել. և սմին իրի ի գիշերի ծննդեան սպառազինեալ գնացին յեկեղեցին ուղղափառքն, զի մի գուցէ ըստ ձայնիցն յանկարծակի կոտորեսցին ի նոցանէ. այս եղև աստ...։

Ցամի տեառն 1770 — Նուաստ ծառայ

ապրիլի 26 — Հայր Կարապետ վրդ. Մխիթ. [Մարտիրոսեան]

[Պաշպալով ?]

ՄՂԴ.

Զանազան վայրերու մէջ գտնուած հայ ձեռագիրներու մասին օգտակար ծանօթութիւններ կու տայ Հ. Միք. Չամչեան։

Գերյարգելի արքահօր մերում տեառն տեառն Ստեփաննոս բարեհնազանդի համբուրիւ աջոյն ողջոյն ի Քրիստոս

... Առ պարոն անբանիսին աներոյ պարոն պօղոսին եղբօր պատ. Հ. Աստուածատուրին գտի զաւետարան մի երկաթագիր իբր 800 ամաց. և ետու զայն ովսաննային բերել ի վանս։ Առ պարոն ադասիին փեսայակցի մղտսի ստեփանին հօր պատ. Հ. Պե-